

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի (տևողությունը՝ 150 րոպե)

10 – րդ դասարան

1. **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**-----1.5 միավոր
 1. Հյուսիսում, Սև ծովի ափին գուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
 2. Տիրապետում են լեռնաանտառային լանդշաֆտները:
 3. Լեռնաշխարհի հյուսիսում հունիսի 22 – ին գիշերվա տևողությունն ավելի երկար է, քան հյուսիսային բևեռում:
 4. Եզրային ծալքաբեկորավոր լեռներից ամենաբարձրը Տավրոսի լեռնային համակարգն է:
 5. Տեղումների քանակն արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ նվազում է:
 6. Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռնազանգվածից:

2. **ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**-----1.5 միավոր
 1. Անասնապահության արտադրանքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
 2. Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունեն տեղական նշանակություն:
 3. Բուսաբուծության մասնագիտացված ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը:
 4. Խոզաբուծությունն առավել զարգացած է Լոռու և Շիրակի մարզերում:
 5. Գյուղատնտեսական հանդակներից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
 6. Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:

3. **Նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՆԱԵԿ) մեջ ընդգրկված է 11 երկիր: Դրանցից են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Իրանը: Թվարկե՛լ մնացած 8 երկիրը.**-----2 միավոր

4. **Բնական աշխարհագրությունը բաժանվում է ճյուղային և համալիրային գիտությունների: Առանձին – առանձին թվարկե՛լ ճյուղային և համալիրային գիտությունները (առանց մեկնաբանելու).**-----2 միավոր

5. **Ի՞նչ ժամանակաշրջանների են բաժանվում Պալեոզոյան, Մեզոզոյան և Կայնոզոյան դարաշրջանները: Թվարկե՛լ առանց մեկնաբանելու (հնից նորը՝ հերթականությամբ)**-----3 միավոր

6. **Թվարկե՛լ աշխարհագրական մշակույթի բաղկացուցիչ մասերը և աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշները (առանց մեկնաբանելու)**-----2 միավոր

7. **Աշխարհագրության գիտական հետազոտության մեթոդները խմբավորվում են հինգ խմբի մեջ: Առանց մեկնաբանելու թվարկե՛լ դրանցից չորսը**-----1 միավոր

8. **Երկրի գնդաձև մակերևույթը հարթության (թղթի) վրա պատկերելու համար կիրառվում է պրոյեկտման արտապատկերման տարբեր եղանակներ (պրոյեկցիաներ): Թվարկե՛լ պրոյեկցիաները՝ դիմացը գրելով, թե դրանցից յուրաքանչյուրով աշխարհագրական ո՞ր լայնություններն են պատկերվում**-----2 միավոր

9. Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ 18 °: Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 520 մմ է (հաշվարկը կատարել 5⁰- ով և պատասխանները հիմնավորել հաշվարկներով):-----2 միավոր
1. Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:
 2. Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:
10. Որքա՞ն է մարզի բնակչության թիվը, եթե գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 29 000 հա է, իսկ 1 շնչին բաժին է ընկնում 2 հա գյուղատնտեսական հողահանդակ (պատասխանը հիմնավորել հաշվարկով)-----1 միավոր
11. Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120 000 կմ է, իսկ տրանսպորտային ցանցի խտությունը՝ 4 կմ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքը (պատասխանը հիմնավորել հաշվարկով)-----1 միավոր
12. Արեգակնային համակարգի և Երկրի առաջացման ի՞նչ վարկածներ կան: Թվարկել վարկածները և նշել հեղինակները-----1 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան